
 «ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴՐԱԽՏԸ» ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ասորեստանի Թիգլաթփալասար I թագավորը մ.թ.ա. 1112 թ. մի մեծ արշավանք է ձեռնարկել Հայկական լեռնաշխարհ՝ Նախրի ցեղամիության դեմ: Իր արձանագրություններում նա պատմում է նախ և առաջ նախրյան 23 «թագավորների», այսինքն՝ ցեղապետ-արքաների, դեմ տարած հաղթանակի, ապա ամբողջ Նախրին նվաճելու մասին¹: Նա հանվանե հիշատակում է ինչպես այդ «թագավորների» երկրները, այնպես էլ արշավանքի ընթացքում իր բանակի հաղթահարած 16 «հզոր լեռները»:

Նախրիի դեմ իր արշավանքը Ասորեստանի այս թագավորը սկսել է ներկայիս Խարբերդ-Դիարբերիր շրջանից, որտեղ և պետք է տեղորոշել հիշյալ լեռներից առաջինը և երկրորդը Էլաման և Ամադանան²: Էլամա «հզոր լեռան»³ անունն է պահել Հայկական Տավրոսի արևմտյան հատվածում գտնվող Ելմա-դաղ («Ելմա սար») լեռնաշղթան⁴: Elama>Ելմա անցումը տեղի է ունեցել հայերենում (միջնադայն ա-ի անկման տեսանկյունից հմմտ. աշակերտ>աշկերտ, Բազարատ>Բազրատ, բաղանիք>բաղնիք և այլն): Հստակ է, որ «Տիգլատպիլեսար Ա-ի արշավուղին, – գրում է Ա. Խաչատրյանը, – եղել է Արևմտյան Տիգրիսի հովտով մինչև Տիգրիսի անձավը, ուր նա թողել է իր արձանագրությունը, ապա Արածանիի հովտով Մանազկերտ, ուր հավանորեն տեղի է ունեցել բախտորոշակատամարտը, ուր կա և իր արձանագրությունը...»⁵:

¹ И. М. Дьяконов. Ассирио-авилонские источники по истории Урарту (*այսուհետև՝ АВИИУ*).—“Вестник древней истории” (АВИИУ), 1951, 2, № 10, 11.

² И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 125, пр. 126, с. 152; Н. В. Арутюнян. Биайнили (Урарту). Ереван, 1970, с. 40, 94-95, 409 411; Նույնի Տопонимика Урарту (*այսուհետև՝ ТУ*). Ереван, 1985, с. 24 25.

³ Elama լեռնանունը հնագույն Էլամ երկրին (Իրանի հարավ-արևմուտքում), իսկ Amadana լեռնանունը արևմտյան Իրանի Համադան քաղաքին առնչելու փորձը (Ա. Սարգսյան. Թիգլաթփալասար I-ի մ.թ.ա. 1112 թվականի նախրյան արշավանքի երթուղին.—ՊԲՀ, 2002, - 3, էջ 218) հաջողված չի կարելի համարել: Ի դեպ, Համադան-ը իրանական քաղաքի անվան միջնադարյան ձևն է: Նրա հին պարսկական ձևը Haggmatāna է, որից բարել. Agamtanu և հին հուն. ’Այթավա/’Եկթավա ձևերը:

⁴ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Երևան, 1988, էջ 175:

⁵ Ա. Խաչատրյան. Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 22: Խոսքը Մանազկերտի շրջանի Յոնշալու գյուղի արձանագրության մասին է (տե՛ս ԱՎИИУ, № 17; Ն. Աղոնեց. Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 59-60, յ. A.

Ժամանակին եվրոպական պատմագրության մեջ տեղ գտած այն կարծիքը, թե Թիգլաթփալասար I-ը իր նվաճումները հասցրել է մինչև Կուր գետի հովիտ և Կասպից ծով, հետագայում մերժվեց՝ որովհետև բխում էր Kirini/Կուր և Paiteri/Փայտակարան անունների պատահական հնյունական նմանության վրա հենված և որևէ այլ հիմնավորում չունեցող կռահումներից: Այսուհանդերձ, անկասկած է, որ Թիգլաթփալասար I-ի բանակը Հայկական Պարից հյուսի ընկած շրջաններում եղել է: Դրա մասին են խոսում հետևյալ հանգամանքները: 1. Իր արձանագրություններում Թիգլաթփալասար I-ը պարծենում է. «Հայնարձակ Նախրի երկրին իր ամրող սահմաններով ես տիրեցի»⁶: 2. Թիգլաթփալասարի հիշատակած 16 «հզոր լեռները» տեղորոշման ավելի քննարձակ տարածք են պահանջում, քան Արևմտյան Տիգրիսի վերնազավառից մինչև Արածանիի վերնազավառ կամ նույն Արևմտյան Տիգրիսի վերնազավառից մինչև Դայանիի//Տայր ձգված շրջաններն են: 3. Նույնը պետք է ասել նաև «նվաճված» 23 երկրների վերաբերյալ: 4. Արձանագրության մեջ հիշատակված լեռնանուններից Շահիշար-ն (⁷Շահի-Շար) և Խաշտարե-ն (⁸Խաշտ-Arae)՝ ի դեմս իրենց *Շար և *Arae բաղադրիչների, պարունակում են Շարայի⁹ և Արայի¹⁰ (Շիրակի, Արարատյան դաշտի և Արայի լեռան առասպելաբանական անվանադիրների) անունները: 5. Հայկական հին ավանդությունը մեր երկրի տարածքում տեղի ունեցած միակ (և հայերի համար կորստարեր) բախումը ասորեստանցիների հետ, սպասածին հակառակ, դնում է ոչ թե Վանա լճի ավազանում, այլ Արարատյան դաշտում: Դրա արտացոլումն ենք տեսնում «Արա և Շամիրամ» վիպերգում:

Մեր կարծիքով, Թիգլաթփալասար I-ի բանակը մ.թ.ա. 1112 թ. անցել էր Հայկական Պարը նրա արևելյան մասում, ապա Տայր հասել Արարատյան դաշտ Շիրակ-Վանանդ-Բայան ուղղությամբ: Դայանիի//Տայրում էին ասորեստանցիները երկրորդ հաղթանակը տարել 60 նախրյան ու դաշնակից ցեղերի աշխարհազորի դեմ, այսուել էր Թիգլաթփալասար I-ը գերեվարել Դայանիի «թագավոր» Սենիին, այսուելից էր նրա դաշնակիցներին հալածել մինչև «Վերին ծով», որը, անկասկած, Աև ծովն է¹¹: Ն. Աղոնցի կարծիքով, «համարյա ստոյգ է, որ 23 պետությունները շարված էին այն ձանապարհի երկու կողմե-

М а н а д я н. О некоторых спорных проблемах истории и географии древней Армении. Ереван, 1956, с. 17, 19):

⁶ Ն. Ա դ ո ն ն շ վ. աշխ., էջ 59, Յ. Ա. Մ ա ն ա ն դ յ ն. Նշվ. աշխ., էջ 17-18:

⁷ АВИИУ, № 11.

⁸ Սովորսի Խորենացոյ պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խոր է ն ա ց ի), Երևան, 1981, Ա, ժր: Շամիշարան դժվար թե լիներ արդի Շարայի լեռը Շիրակում (բարձր. 2474 մ, կոչված նաև Կոլգաթ, Ղոլգաթ): Թիգլաթփալասար I-ը իր տեսադաշտում հայտնված Արազածը (բարձր. 4096 մ) թողած՝ դրան չէր դասի նախրյան 16 «հզոր լեռների» շարքը:

⁹ Խոր է ն ա ց ի, Ա, ժե, Ա, ժգ, Սերէոսի եպիսկոպոսի պատմութիւն, Երևան, 1939, գլ. Ա, էջ 6: Խաշտարե լեռնանվան Հաշտ-Արայե արտասանությունն ընդունելիս (սեպազր. հ/լս, հ), նրա առաջին բաղադրիչը կարող ենք արմատակիցը համարել աշտարակ բառի և Աշտարակ տեղանվան առաջին աշտ-բաղադրիչների: Այս դեպքում Խաշտ-Arae լեռնանվան մոտավոր իմաստը «Բարձրյալն Արա» է լինելու:

¹⁰ И. М. Д յ ա կ օ ն օ վ. Предыстория..., с. 125, пр. 124, с. 126; Н. В. А р ү տ յ ո ն յ ա ն. Биайнили (Урарту), с. 40, 412.

րում, որտեղից անցել է ասորեստանյան քանակը»¹¹: Ավելացնենք. արձանագրության մեջ հիշատակված 16 «հզոր լեռները» ևս գտնվել են այդ նույն ձանապարհի շուրջ: Ասորեստանցիները դրանք «հաղթահարել» են 23 երկրներով անցնելու ընթացքում: Այսպիսով, հնարավոր է որոշակի համապատասխանության մեջ դնել լեռները երկրների հետ: Քանի որ առաջինն հիշատակված լեռը՝ Էլաման, գտնվել է առաջինը հիշատակված երկրում՝ Թումմենում¹², իսկ լեռներից վերջինը հիշատակված Շեշեն գտնվել է երկրներից վերջինը հիշատակված Դայանիում¹³, հետևաբար, մյուս լեռները հերթականությամբ պետք է գտնվեին նույնպես հերթականությամբ հիշատակված երկրներում: Օրինակ՝ 5-րդ և 6-րդ տեղերում հիշատակված լեռները գտնվել են 6-րդ, 7-րդ և 8-րդ (բայց երեսույթին, նաև 9-րդ) տեղերում հիշատակված երկրներում կամ դրանց շրջապատում¹⁴:

Ամենայն հավանականությամբ, Թիգլաթփալասար I-ի ձեռքի տակ, հետագա Պետինգերյան քարտեզի նման, Հայկական լեռնաշխարհի ինչ-որ ձանապարհացույց է եղել զլիավոր ձանապարհների շուրջ զոյլություն ունեցած «հզոր լեռների» և «երկրների» ցուցումով: Ինչպես Վ. Ա. Յակոբսոնն է նշում, այդ արշավանքի ճշգրիտ երթուղին անհայտ է, բայց, բայց երեսույթին, այն ընթացել է առևտրական հին ձանապարհով¹⁵: Կարծում ենք, որ նաև ռազմավարական կարևոր նշանակություն ունեցած առևտրական այդ հին ձանապարհը հիմնականում այն նույն ուղղեցին է ունեցել, ինչ ավելի ուշ հոռմեական քանակների Տոմիսա-Տիգրանակերտ, Տիգրանակերտ-Արտաշատ և Արտաշատ-Սատաղ արշավուղիների ամբողջությունը (հմմտ. Պետինգերյան քարտեզի համապատասխան երթուղիները):

Կողք կողքի դնելով Թիգլաթփալասար I-ի մ.թ. ա. 1112 թ. նաիրյան արշավանքի նկարագրության մեջ հիշատակված լեռների և երկրների ցուցակները, կունենանք հետևյալ մոտավոր համապատասխանությունը:

¹¹ Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 61:

¹² Հայտ երեսույթին, Տոմմե երկրի անունը նույնական է Եփրատի գետանցի մոտ գտնվող Թըմիս ամրոցի (Տոմիսա) անվան հետ, իսկ դրանց հիմքում հ.-է. *տմ- արմատն է: Վերջինից ունենք թումբ «գետի առաջ շինված պատնեշ», «տան շուրջը քաշած պատ» բայր [Հ. Ա ծ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ], հ. II, Երևան, 1973, էջ 206]: Այս Տոմմե//Տոմմի (<*Տոմ-նի> երկրից բացի զոյլություն ուներ մեկ ուրիշ Տոմմե, որը գտնվում էր Հայկական լեռնաշխարհի հարավում (ՏՅ, ս. 188-189): Հարավային Տոմմե-ն ընդգրկել է Հռիփսիմյանց վարքում Թըմիս կոչված բնակավայրի շրջանը: Հետագայում Թըման (<*թում-ան> անունով են հայտնի դարձել թե՝ բնակավայրը, թե՝ իր շրջանը՝ Կորդուք զավառը (Մ. Ե թ է մ յ ա ն. Հայաստանը բայց «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 53):

¹³ Հ. Բ. Ա ր ս տ յ ա ն. Բնայնիլի (Սրբություն), ս. 42, 415-416.

¹⁴ Մ. Պ է տ ր ո ս ս յ ա ն. «Եղջերավոր»— «զիշատիչ» հակադրամիասնական պաշտամունքի արտացոլումը նաիրյան մի քանի տեղանուններում: «Հայ ժողովրդական մշակույթ», ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հանրապետական գիտ. նստաշրջան, IX, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1997, էջ 48:

¹⁵ Բ. Ա. յ կ օ բ ս օ հ. Մեսոպոտամիա և ԽVI-XI վ. դ. հ. թ.- Իстория древнего мира. Ранняя древность. М., 1989, с. 208. Թիգլաթփալասար I-ի բանակի արշավուղու հյուսիսային հատվածը սկսվելով Արարատյան դաշտից, այսուհետև ընթանալու էր Շիրակ-Վանանդ-Բասեն-Կարին հիմնական ուղղությամբ: Այդ նույն ուղղությունն ունեն ներկայիս Գյումրի-Կարս-Սարիղամիշ-Խորասան-Հասանկալե-Երզրում երկաթուղային և խճուղային ձանապարհները:

<i>Թիվ</i>	<i>Լեռներ</i>	<i>Խումբ</i>		<i>Թիվ</i>	<i>Երկրներ</i>	<i>Խումբ</i>	
1.	Elama	<i>I</i>		1.	Tumme	<i>I</i>	
2.	Amadana			2.	Tunube		
3.	Elhiš			3.	Tualı		
4.	Šerabeli	<i>II</i>		4.	Kindari	<i>II</i>	
5.	Tarhuna			5.	Uzula		
6.	Tirkahuli	<i>III</i>		6.	Unzamuni		
7.	Kizra			7.	Andiabe		
8.	Tarhanabe	<i>IV</i>		8.	Pilaqinni		
9.	Elula			9.	Aturgini		
10.	Haštarae	<i>V</i>		10.	Kulibarzini	<i>IV</i>	
11.	Šahišara			11.	Šinibirni		
12.	Ubera	<i>VI</i>		12.	Himua		
13.	Miliadruni			13.	Paiteri	<i>V</i>	
14.	Šulianzi	<i>VII</i>		14.	Uiram		
15.	Nubanaše			15.	Šururia		
16.	Šeše	<i>VIII</i>		16.	Abaeni	<i>VI</i>	
				17.	Adaeni		
				18.	Kirini		
				19.	Albaïa	<i>VII</i>	
				20.	Ugina		
				21.	Nazabia		
				22.	Abarsiuni	<i>VIII</i>	
				23.	Dañaeni		
<i>ընդամենը՝ 16 լեռ</i>				<i>ընդամենը՝ 23 երկիր</i>			

Մեր կարծիքով, Թարիսանարեն Հայկական Պար լեռնաշղթան է (Մասիսներով), որով ավարտվում է Հայկական լեռնաշխարհի հարավային կեսի 8 լեռների թվարկումը, և որից հետո սկսվում է հյուսիսային կեսի 8 լեռների թվարկումը: Հստ բերված ցուցակի, *V* խմբի երկրները՝ *Himua*-ն, *Paiteri*-ն, *Uiram*-ը գտնվել են *V* խմբի լեռների՝ *Elula*-ի և *Haštarae*-ի հարեանությամբ: Քանի որ *Haštarae*-ն *Արայի* լեռն է, իսկ նրանից հետո հիշատակված *Šahišara*-ն, *հավանաբար*, *Արազածը*, որը գտնվում է դրանից հյուսիս-արևմուտք, ուրեմն, դրանից առաջ հիշատակված *Elula* լեռը կարող էր գտնվել դրանից՝ *Haštarae*// *Արայի* լեռից, հարավ-արևելքը: *Elula*-ի այդպիսի տեղորոշումը և անկան ստուգաբանությունը ցույց են տալիս, որ դա Գնդասար լեռն է (2974 մ)՝ Գեղամա լեռնաշղթայի հարավային ծայրին, նրա և Վարդենիսի լեռնաշղթայի հատման վայրում¹⁶: Լե-

¹⁶ Ա. Ա ս լ ա ն յ ա ն, Հ. Գ ր գ է ա ր յ ա ն. Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Երևան, 1981, էջ 56:

ռան ժամանակավից Գնդասար անունը (և նրա թրք. Թոփիդաղ կրկնորդը) հստակ ստուգարանություն ունի՝ Գնդասար <*գունդ-ա-սար:

Նախապես նշենք, որ *El-ula բաղադրիչներով կազմված այս լեռնանվան *El-բաղադրիչը առկա է ինչպես նույն արձանագրության մեջ հիշատակված Elama (<*El-ama) և Elhiš (<*El-hiš) լեռնանուններում, այնպես էլ խեթական արձանագրությունների Eluriia (<*El-ur-iia)¹⁷ և ասորեստանյան արձանագրությունների Elamuni (<*El-am-unii?)¹⁸ լեռնանուններում: Այս լեռնանունների *El- բաղադրիչները նույնական են հայերեն ել արմատի հետ՝ առկա հետևյալ բառերում. ելուն «դրս ցցված», ելանել «դրս գալ, ծագել, բիւլ», «վեր բարձրանալ» և այլն, իսկ բարբառային ել «զարիվեր»¹⁹: Հայերեն այս արմատը ծագում է հ.-ե. *el- «ելնել, բարձրանալ, աձել» նախաձեից, որից են սերում նաև ազգակից լեզուների հետևյալ բառերի արմատները. իին հնդկ. rōdhati «բարձրանալ, աձել», ավեստ. rao(aiti «աձում է», գոյք. liu(ан «աձել» և այլն²⁰: Մեր ել-ի «զարիվեր» նշանակությանը առավել մոտ է հին հնդկ. rōdhas նույնարմատ բառի «զարիթափ ափ» նշանակությունը (նշանակում է նաև «թումք», «ամբարտակ, պատնեշ, պատվար»)²¹: Մեր ել արմատի նախնական նշանակությունը հիշյալ լեռնանուններում լինելու էր «բարձունք, սար»:

El-ula լեռնանվան երկրորդ բաղադրիչի մեջ մենք հակված ենք տեսնելու հայերեն ողն «կրնակ, ողնաշար» բառի ող արմատը. ողն < h.-ե. *ol-en-²², որտեղ *ol- «ծոել, ճկել, կորացնել»: Նույն այս արմատն է առկա նաև ողկույզ (<*ող-կույզ) «խաղողի ծուքը, կուգ» (բարբառներում նաև կոյզ // կուգ տեսրով)²³ և ոլոռն (<*ոլ-որ-ն) բառերում (վերջինիս կազմության համար հմմտ. ոլորք, ոլորտ): Ոլոռն ոչ միայն «բակլայի կամ մաշի նման ընդեղեն» է նշանակում, այլև «կողշոր կաթիլ (քրտինքի, արցունքի)», «կտրված կաթի մեջ ձևացած գնդիկները», «կարկուտի մեկ հասիկը» և այլն²⁴: Կարծում ենք, որ ողն -ի *olen նախաձեի երկար *olen- տարբերակից է ծագում ուլն «մարգարտի հատ կամ զարդի համար փոքրիկ օղակաձև ապակի» բառը, որից ունենք բարբառային ուլունք, իլուն ձևերը «ուլունք» և «ոլոռի մեծությամբ կտոր կամ կաթիլ (շաքարի, քրտինքի)» նշանակություններով²⁵: Իսկ վերջիններիս բնորոշ է ուռուցիկ գնդաձևությունը: Այս իմաստով կուլն-ի կամ ողն-ի *ol- կամ *ol- արմատը առկա է Գնդասարի հնագույն Elulu (<*el – «սար» + ul – «գնդաձե») անվան մեջ:

Վերոբերյալ ցուցակում լեռնանունների և երկրանունների 2:3 հարաբերությամբ (16:8=2, իսկ 23:8(3) զուգադրումից, ինչպես տեսանք, բխում է, որ Uiram և Sururia երկրները գտնվել են Խաշտարե և Շահիշար լեռների հարևանությամբ: Քանի

¹⁷ В. Н. Х а ч а т р я ն. Восточные провинции Хеттской империи. Ереван, 1971, с. 72, 75.

¹⁸ ТУ, с. 253.

¹⁹ ՀԱԲ, հ. II, էջ 8-9:

²⁰ Նույն տեղում:

²¹ Wörterbuch Sanskrit-Deutsch, von Prof. Dr. Dr. habil. Klaus Mylius. Leipzig, 1980, S. 407.

²² Գ. Զ ա հ ո ւ կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետեւ ՀՀՊՆԾ), Երևան, 1987, էջ 122, 238:

²³ ՀԱԲ, հ. III, Երևան, 1977, էջ 553:

²⁴ Նույն տեղում, էջ 551:

²⁵ Նույն տեղում, էջ 592-593:

որ դրանցից *Šururia*-ն ավելի մոտ էր Շահիշարա լեռանը (հավանաբար, *Արագածին*), ապա տեղորոշվելու է ավելի արևմուտք, քան դրանից առաջ և Մաշտարա (Արայի) լեռանը կից հիշատակված *Uiram*-ը: *Սրանց* անունների ստուգաբանությանը ձեռնամուխ լինելուց առաջ փաստենք, որ նախապէս հայոց հնագույն խաղողի ու զինու աստվածությանն են վերաբերել այն ավանդագրույցները, որոնց համաձայն Նոյ նահապէտը առաջին խաղողի որթը տնկել է Երևանում և եղել է իր մշակած խաղողից քաշած առաջին զինին բմապողը և առաջին հարրած մարդը²⁶:

Երևանի առնչությամբ հոյժ ուշագրավ է միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում գեղ (ձեռագրական սխալի հետևանքով՝ երբեմն գեղ, գեղ) բառին տրված բացատրությունները. «Գեղ - երեւան, կամ գեղ», «գեղ եւ գեղ. երեւանի կամ յայտնի», «գեղ. երեւան»²⁷: *Մեր կարծիքով՝* Երեւան //Գեղ համադրումը բացատրվելու է նրա խաղողի հայրենիք բմբոնվելու իրողությամբ (գեղ-արմատը պարունակող Գեղամ և Գեղա(ր)քունիք անունները կրած անձի և զավարի հետ Երևանը որևէ կապ չունի): Երևանի առնչությամբ բերված գեղ-ը ծագում է հ.-է. *նել- «ոլորել, փաթաթել» արմատից, որից և նրա միջին ու ստորին ձայնդարձերից ունենք հայերեն գեղձ «բաղեղ, պատառուկ», գաղձ «մի տեսակ պատառուկ, գայլխոտ, որ ուրիշ բույսերի վրա փաթաթվելով՝ դրանց հյութը ծծում և չորացնում է» լատին. con-volvulus, հուն. ελός «բաղեղ», մանավանդ «որթի ճյուղ», «խաղողի որթ» բառերը²⁸: Անտարակույս, խաղողի որթը այդպէս կոչվել է բաղեղի և պատառուկի նման ուղրվելով աձելու ու իր հենարանին փաթաթվելով՝ բարձրանալու պատճառով: Երևանի համբավը որպէս խաղողի ու զինու հայրենիքի իր արտացոլումն է զուել ինչպէս հեքիաթների ներածականներում, այնպէս էլ մանկական խաղերգերում՝ ընդ որում, նաև Արևմտյան Հայաստանում²⁹ և հայկական այնպիսի մի հեռավոր գաղթօջախում, ինչպիսին Նոր Նախջնանն է³⁰:

²⁶ Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում, Երևան, 1969, էջ 169, 336:

²⁷ Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները շ. Ամայանի, Երևան, 1975, էջ 63, էջ 63, ծնթ. 102, էջ 356, ծնթ. 102: Գեղ բարի «երեւանի կամ յայտնի» բացատրությունը ստեղծվել է Երեւան տեղանունը երեւալ բայից բխեցնող ժողովրդական ստուգաբանության հիման վրա: Իսկ դրա հենքը Նոյ նահապէտի մասին հայկական ավանդություններն են (տե՛ս Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 156, 157): Դրանց տեղյակ էին անգամ XIX դ. սկզբին Հայաստան այցելած ելրոպացի ճանապարհորդները: Անգլիացի Ուիլյամ Առողելը իր հուշերում գրում է. «Հայերը, որոնք քիչ անգամ են մոռանում իրենց մեծ նախահայր Նոյին, երևակայում են, որ Երևանը (Երևան) «Երևալ» նշանակությամբ, պետք է լինի այն շրջանը, որ առաջին անգամ երևաց նահապէտին, երբ նա իշնում էր Արարատ լեռից» (շ. շ ա կ ո բ յ ա ն. Ուղեգրություններ, հ. VI, Երևան, 1934, էջ 453): Այսպիսով, գեղ բառը իր «երեւանի կամ յայտնի» բացատրությամբ ևս առնչվում է մշակովի խաղողի հայրենիք բմբոնված Երևանին և առաջին խաղողագործ Նոյ նահապէտին:

²⁸ ՀԱԲ, հ. I, Երևան, 1971, էջ 506, 530-531, 534, Դревнегреческо-русский словарь. Т. I. М., 1958, с. 513.

²⁹ Գ. շ ա կ ո բ յ ա ն. Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուտությունը, Երևան, 1974, էջ 348:

³⁰ Խ. Փ ո ր ք շ ե յ ա ն. Նոր Նախջնանի հայ ժողովրդական բանահյուտությունը, Երևան, 1965, էջ 130:

Նոյի հայկական նախատիզը մի կողմից խաղողին և զինուն, մյուս կողմից Մասիսին ու Նոյի տապանին առնչվում է տապան քառի իմաստաբանական կրկնորդ նաւ քառի միջոցով, որը նաև «ավազան, տաշտ (զինու համար)», «կոնքածն աման զինի կամ քաղցու ածելու համար» նշանակությունն ունի³¹: «Որքն դրախտաբոյս է տունկ, /Զոր բերէ զիսաղողն ողկուգեայ, /Ազնիւ գովական պտուղ, /Ճաշակածն ասեն Աղամայ»³² միջնադարյան տաղից պարզվում է, որ մեր խաղողագործ և զինեզործ աստվածությունը նույնացված է եղել նաև աստվածաշնչյան Աղամի հետ, իսկ խաղողի որթը համարվել է «դրախտաբոյս տունկ»: Փաստորեն, գործ ունենք Հայաստանի ինչպես «երկիր դրախտավայր», այնպես էլ խաղողի հայրենիք բարոնվելու արձագանքների հետ (այստեղ՝ Մեղրու և Լոռի-Փամբակի կիրճերում դեռևս պահպանվում են վայրի խաղողի տեսակներ)³³:

Ի տարբերություն Հայաստանի արևմտյան մասում (Արևմտյան Եփրատի ավագանը և Տիգրիսի վերնազավառը ներառյալ) տեղորոշվող աստվածաշնչային դրախտի, շուտմերների և էլամցիների պատկերացրած դրախտը՝ «Աստվածների պարտեզը», տեղորոշվում է Արարատյան դաշտում: Աստվածաշնչային Նոյի միջագետքյան նախատիզ Ուտնապիշտիմին հանդիպելու համար Հայկական լեռնաշխարհ ուսոր դրած Գիլզամեշը, «Գիլզամեշ» դյուցազնավեպի համաձայն, «հեռվեն նշմարեց աստվածներու պարտեզը և անոր քով փութաց: Սարդիոնե ծառը հոն իր պտուղը ուներ: Որթատունկերը պատած էին զայն և խաղողի ողկուզները կախված էին անկե»³⁴ (ընդգծումը մերն է – Ս. Պ.): Աստվածների պարտեզն ուներ իր հսկիչը, որը աստվածների մատովակ Սիրուրի դիցուիին էր³⁵: Դյուցազնավեպի այդ դրվագում առկա է Հայկական լեռնաշխարհի խաղողի այզիների և զինեզործության վերաբերյալ շուտմերների ունեցած պատկերացումների արձագանքները: Արմավիրի պեղումների ժամանակ հայտնաբերված կավե սալիկներից մեկի էլամերեն տեքստը պարունակում է մի հատված «Գիլզամեշ» դյուցազնավեպից: Ընդ որում, դա Գիլզամեշի ու Սիրուրի դիցուիու հանդիպման դրվագն է³⁶: Ի պաշտոնե Սիրուրին կոչվում էր նաև սահիւ «մատովակ»³⁷: Ամենայն հավանականությամբ, նաև վերջինովս է պայմանավորված եղել այն հանգամանքը, որ Ուրարտու ժամանած էլամցի դերասանները Գիլզա-

³¹ ՀԱԲ, հ. III, էջ 433, Սալիս Սալիս և յանց գ. Հայերեն բացատրական քառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. III, Երևան, 1944, էջ 444:

³² Կ. Կ ո ս տ ա ն ե ա ն ց. Նոր ժողովածու. Միջնադարեան հայոց տաղեր եւ ուտանաւորներ, պրակ Ա, Թիֆլիս, 1892, էջ 39:

³³ Հայկական սովորական հանրագիտարան, հ. V, Երևան, 1979, էջ 5:

³⁴ Ն. Ս ա ր ի ր ո ս յ ա ն. Գիլզամեշ. Հին Արևելքի դյուցազնավեպ, Երևան, 1963, էջ 78:

³⁵ Նույն տեղում, էջ 79, 120:

³⁶ Ս. Հմայակյանի կարծիքով, ներկայացումը տրվել է ուրարտական քազավորի կամ քազատառանզի պատկանողության ամիսով (Ս. Հմայակյան, Վանի քազավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 98-99, ծան. 76):

³⁷ Գր. Կառահցիան. Օբ սրբակության բարեկարգության մասին. Շենքեկագիր, 1946, № 11-12, էջ 13-15: «Գիլզամեշ»-ի խեթերեն թարգմանության մեջ Սիրուրի դիցուիու սահիւ մակղիրը փոխարինված է Տինա-ով (նույն տեղում, էջ 14): Հմայակյանը թիւն «խաղողի կուտ» (ՀԱԲ, հ. II, էջ 184), «խաղողի կորիզը, կճեպը, չեչ» (ՀԲԲ, հ. II, Երևան, 1944, էջ 107):

մէշի և Սիդուրի դիցուհու հանդիպման տեսարանը ներկայացնեն խաղողագործության և զինեղործության հայրենիք համարված ուրարտական դարաշրջանի Ուազա (*Aza*) երկրում, նրա կենտրոնատեղի Արգիշտիխնիլի-Արմավիրում³⁸: Այս երկրանունը՝ *Aza//Uaza//Jaza*, Ն. Հարությունյանը ստուգաբանում է վազ «խաղողի որթ» բառի միջոցով, այն հասկանալով որպես «խաղողի վազերի (երկիր)»³⁹: Արարատյան դաշտի այս հատվածի խաղողի մշակության և զինեղործության հնագույն կենտրոններից մեկը լինելու վկաներն են Մեծամորի բրոնզեդարյան սրբարաններից մեկում կավակերտ բլիթ-հացերի, ծիսական հաց թխելու օջախի ու սացի կողքին հայտնաբերված երկարավիզ սափորները, որոնք «վկայում են զինու հեղման արարողություններ»⁴⁰:

Թիգլաթփալասարի արձանագրության մեջ հիշատակված նախրյան Շուրուրիա երկիրը ևս համընկնում է հետազա Արազածոտն զավառի կամ նրա մեծ մասի հետ, որովհետև վերոբերյալ լեռներ-երկրներ ցուցակի համաձայն հարել է Շախիշարա (հավանաբար, Արազա) լեռանը: Շուրուրիա երկրի *Sur-ur-ia* բաղադրիչների տրոհվող անունը նույնպես «խաղողային» բնույթ ունի: Այն կազմող բաղադրիչներից առաջինը արմատ է, իսկ երկրորդն ու երրորդը՝ վերջածանցներ: *Տեղանվան առաջին բաղադրիչը նույնական է հայերեն* *շուր (< h.-ե. *sker – «պտտել, դարձնել, թերել») արմատի հետ առկա շուրջ, շուրք, շուտ, շրտել «թերել, ծոել» բառերում⁴¹: Այս նույն արմատն ենք տեսնում նաև շրքամ (< *շուր-քամ) և շրուանդ (< *շուր-վանդ) բառերում: Մրանցից շրքամ-ը նշանակում է «զրախառն քաղցու» (*շուրքամ հմմտ. քամել), իսկ շրուանդ՝ «խաղողի ձիթ, որի վրայից պոկած են խաղողները, չանչ, քնքեռն» (հմմտ. շոր «խաղողի չանչ կամ կնճիռ, որից արդեն քաշված է օղին»)⁴²: Ի դեպ, շրուանդ բառի *վանդ (< h.-ե. *սոն-դհ-) բաղադրիչը, *շուր-ի նման, ի ցույց է հանում խաղողի վազի ոլորվելով աճելու ձևը: Հ.-ե. *նենդհ- նախաձեկից ունենք նաև զինդ «խաղողի խիղր» բառը⁴³:

Շուրուրիա <*Sur-ur-ia* երկրանվան երկրորդ՝ -ur-, բաղադրիչը նույնպես հնդեկ-րոպական ծագում ունի և նույնական է հայերեն -որ կամ -ուր (տարբերակներ են)⁴⁴ վերջածանցների հետ: Երկրանվան երրորդ բաղադրիչը՝ -ia-ն, ծագում է հ.-ե. -i(?)ա վերջածանցից, որը *Գ. Զահուկյանի կարծիքով, վաղնջակայերենում (մ.թ. ա. III հազ. սկզբից մ.թ. ա. XIII դ.) դեռևս գործուն և արդյունավետ վերջա-*

³⁸ ТУ, с. 13, 32 33.

³⁹ Н. В. А р ү т ю н я н. Новые урартские надписи Кармир Блура. Ереван, 1966, с. 91, пр. 43. Վազ «խաղողի ուր» բառը Հ. Աձարյանը նույնարմատ է համարում վազել «դուրս ցաւկել» բայի հետ (ՀԱԲ, հ. IV, Երևան, 1979, էջ 293): Գ. Զահուկյանը դրանք հակած է բիւեցնելու հ.-ե. *նեղ-շարժվել, ընթանալ» արմատից (Գ. Բ. Դ յ ա ս կ յ ա ն. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967, с. 264 265):

⁴⁰ Մեծամոր (ուսումնասիրություն 1965-1966 թթ. պեղումների տվյալներով), Երևան, 1973, էջ 123:

⁴¹ Г. Б. Դ յ ա ս կ յ ա ն. Очерки ..., с. 146, 263.

⁴² ՀՀԲ, հ. III, էջ 548, 543, 532:

⁴³ ՀԱԲ, հ. I, Երևան, 1971, էջ 557:

⁴⁴ ՀՀՊՆԾ, էջ 234-235:

ծանց է եղել⁴⁵: Այն որպես տեղանվանակերտ վերջածանց առկա է խեթական, ասորեստանյան, ուրարտական սեպագիր արձանազրություններից հայտնի հայկական այնպիսի տեղանուններում, ինչպիսիք են Alzīa, Arniā, Arziā, Alqania, Alia, Alluria և այլն⁴⁶: Այս նույն տեղանվանակերտի հետին ձևն է վկայված Լօնի, Կարբի, Կոթի, Կումայրի, Ուշի, Փարպի և այլ տեղանուններում:

Հետագա դարերում ևս Արարատյան դաշտի այս հաստվածք խաղողի մշակության ու զինեգործության հռչակված կենտրոն էր: Երվանդունյաց դարաշրջանում Արագածոտնը կոչվում էր *Սակաւ: Այս տեղանվան մեջ առկա է «զինի» նշանակող *սակ արմատը (հմմտ. սակարան «մատովակների մառանը» և «զինու մեծ զավաթ»)⁴⁷ և -աւ տեղանվանակերտ վերջածանցը (հմմտ. Կճաւ, Զիրաւ, Վարդնաւ և այլն): Արմավիրում հաստատված Երվանդունի թագավորներից առաջինը կոչվում էր Երուանդ Սակաւակեաց, այսինքն՝ «Սակավում բնակվող»⁴⁸ (հմմտ. Միւնակեաց՝ «որ կեայ ի վերայ սեան, բնակեալ ի զուիս սեան»⁴⁹): Պտղումեոսի «Ասիայի երրորդ քարտեզում» Մեծ Հայքի վարչական միավորներից մեկի Sacasene regio-ն Կուր զեսի աջափնյակում գտնվող Sacasene//Շակաշենը չէ, որովհետև նշված է Շիրակից (Siracene regio) աջ և Արմավիրից (Armauria) վերև: Հստ այսմ, Sacasene-ն ուղղելի է *Sacaցեն <*Սակաւ-ենե (ձևափոխվել է Sacasene//Շակաշեն-ի ազդեցությամբ): *Սակաւ-ի հիմք՝ *սակ արմատը արաբերենից փոխառյալ լինել չի կարող, որովհետև, ըստ Քսենոփոնի, նրանով կազմված անուն՝ (ά((ε, կրում էր մ.թ. ա. VII-VI դդ. սահմանագլխին թագավորած Սարաց Աստիագես թագավորի մատովակը⁵⁰: Հստ երևույթին, Սակաս-ը այդ անձի բուն անունը չէ, այլ պաշտոնի անվանումը՝ «մատովակ» իմաստով: Նոյն *սակ արմատով բառեր կան նաև հնդեվրոպական մյուս լեզուներում: հմմտ. լատին. sac-catum «կատորակ զինի», «խառնուրդ ըմպելիք», «պղտոր, վատահամ խմիչք», ալբան. gjak «արյուն» (առասպելաբանական ընկալմամբ «զինի»//»արյուն»), ոռուս. сок «հյութ, ավիշ, քամուր», պրուս. sackis «բուսերի և պտուղների հյութ» և այլն⁵¹: Ի դեպ, Երուանդ/Արուանդ թագավորի վերաբերյալ առասպելի մի պատահիկի համաձայն, նա արգելափակված էր «ի զեսու և ի մառանս»⁵²: Արագածոտնի հռչակը որպես զինու մառանի վավերացված է ավելի ուշ օտարների կողմից նրան տրված Շարաբիսանե (պար. šarab'hane «զինեսուն»), Շարապ-

⁴⁵ ՀՀ ՊՆԾ, էջ 231:

⁴⁶ Ա. Ք ո ս յ ա ն. Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, էջ 33, 41, 42, Բ. հ. Խ ա շ ա թ ր յ ա ն. Վոստոчные провинции Хеттской империи (вопросы топонимики). Ереван, 1971, с. 139 143; ՏՅ, с. 20, 21, 23.

⁴⁷ ՀԱԲ, հ. IV, էջ 159-160:

⁴⁸ Խ ո ր ե ն ա ց ի, Բ, կե, Ս. Պ է տ ր ո ս յ ա ն. Հայոց երեք արքայազունների հասարակական ֆունկցիաների մասին.- ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ զիստ աշխատություններ, III, Գյումրի, էջ 69-71, ն ո ւ յ ն ի՝ Դասերը և եռադասության դրսնորումները հին Հայաստանում, Երևան, 2006, էջ 350-353:

⁴⁹ Նոր բառզիրը հայկակեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. II, Երևան, 1981, էջ 716:

⁵⁰ Xenoph., Cyrop., III, 8-11.

⁵¹ Ս. Պ է տ ր ո ս յ ա ն. Հայոց երեք արքայազունների հասարակական ֆունկցիաների մասին, էջ 71:

⁵² Պ. Հ ա կ ո բ յ ա ն. Գալուստ Տէր-Մկրտչյանի նամակները Նիկողայոս Մատին.- Մառը և հայագիտության հարցերը, Երևան, 1968, էջ 257:

իմանք անվան մեջ⁵³:

«Խաղողային» ստուգարանությամբ անուն ունի նաև *Uiram երկիրը, որը, Թիզլաթփալասար I-ի արձանագրության համաձայն, գտնվում էր Paiteri և Տսրուրիա երկրների միջև, իսկ բայց վերոբերյալ լեռներ-երկրները ցուցակի, հարում է Խաշտարային՝ Արայի լեռանը: *Uiram*/*Ուրամ* երկրանվան մեջ կարելի է առանձնացնել *նիր- արմատը և -ամ վերջածանցը (վերջինիս համար հմմտ. թառամ, թարշամ, խալամ, սիրամ և այլն): Երկրանվան *նիր- արմատը նույնական է վիրենի բառի վիր արմատի հետ, որին հավելվել է բուսանվանակերտ և նի վերջածանցը (հմմտ. դեղձենի, ուտենի, տանձենի և այլն): Վիրենի նշանակում է «խաղողի մի տեսակ, սև կլոր հատիկներով ու բարակ կեղևով»⁵⁴: Ինչպես հայերեն այս բառը, այնպէս էլ կապաղովլյան հունարենի վերաբերյալ այսպիսի բառով առաջ երենց հիմքում ունեն հնդեվրոպական նախալեզվի *նիր- «ոլորել, պտտել, փաթաթել» արմատը: Հստ երևույթին, նախկին *Uiram*-ի տարածքում է գտնվել Ստրաբոնի կողմից Արաքսի ափին, Արտաշատից արևմուտք հիշատակված՝ ‘Աչարա անունով քաղաքը’⁵⁵: Եթե հուն. *Աչարա*<*նազարա, ապա այս տեղանվան մեջ ևս կարելի է առանձնացնել վազ «խաղողի որթ» բառը, որին հավելվել է -ար վերջածանցը (հմմտ. այս վերջածանցը արդար, կերպար, մոլար, պալար և այլ բառերում):*

Ասվածների հիման վրա կարելի է նոր տեսանկյունից դիտարկել Ստրաբոնի հաղորդումը հայաստանաբնակ այնհանների մասին: Ավելի հին աղյուրներից օգտված հույն աշխարհագետը հաղորդում է հետևյալը. «Պատմում են, որ այնիանների մի մասը բնակվում է Ուխտիայում, իսկ մյուս մասը՝ Արմենիայից վերև, Արոսի և Նիբարոսի (սրանք *Տավրոսի* մասերն են) հետևում»⁵⁶: Արմենիա անվան տակ Ստրաբոնին աղյուր ծառայած երկը, անշուշտ, ի նկատի է առել ոչ թե ամբողջ Հայաստանը, այլ Արևմենյան աշխարհակալության հայկական երկու սատրապություններից XIII-ը (արմենականը), իսկ «Արմենիայից վերև», այսինքն՝ լորանից հյուսիս-արևելք, գտնվել է հայկական XVIII սատրապությունը (սասպէյր-մատիեն-ալարույանը)⁵⁷: Այնիանների երկրորդ հատվածի տեղադրությունը, ինչպես տեսանք, հույն աշխարհագետը ճշտում էր «Արոսի և Նիբարոսի հետևում» բառերով: Իսկ դա նշանակում է Մասիսներից հյուսիս, բայց ոչ թե Վանանդ-Շիրակում⁵⁸, այլ Արարատյան դաշտում, քանի որ Ստրա-

⁵³ Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 53:

⁵⁴ ՀԲԲ, հ. IV, Երևան, 1945, էջ 346:

⁵⁵ ՀԱԲ, հ. III, էջ 607:

⁵⁶ Strabo, XI, 14, 3.

⁵⁷ Strabo, XI, 14, 14.

⁵⁸ U. Պ է տ ր ո ս յ ա ն. «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուս-արևելքում (մ.թ.ա. VI-V դր.) – ՀՀՈՒՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, № 12, էջ 66-67: Հայկական Պար լեռնաշղթային հարավից հարող Արածանիի վերին հոսանքի շրջանը եղել է բուն Արմենիայի (XIII սատրապության) հյուսիսարևելյան ծայրամասը (Լ. և ո. Երկրի ժողովածու, հ. I, Երևան, 1966, էջ 256, Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն և ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. I, Երևան, 1944, էջ 64, 66):

⁵⁹ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն և ն. Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 12-13, Ս. Ե թ ե մ յ ա ն. Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և

բոնք այնիների այս հատվածը հարևանն է համարում սարապարների⁶⁰: Տարածական կոչումները Շիրակ-Արշարունիքի բնակիչներն են՝ նրանք, որոնց Մովսես Խորենացին համարում է «Շարայի ծնունդը». Տարածական պատճենների մասին պատճենները՝ պատճենների մասին պատճենները:

Արարատյան դաշտի հնագույն երկրանունների «խաղողագինիական» ստուգարանությունների լույսի ներքո փորձենք ստուգարանել նաև նրա հին բնակիչների կրած այնիները (Անվանությունը՝ Կարծում ենք, որ այն պետք է վերականգնել *զայնան տեսքով և բաժանել *նաև- «զինի» և -ան բաղադրիչների: Վերջինս ածականակերտ-ցեղանվանակերտ վերջածանց է. հմմտ. Abil-ian-ihi //Աբել-եան-ը, Փաօ-ւան-օի //Բաս-եան-ը, Գաբել-եան-ը, հաշտ-եան-ը: Հին հունարենի այլ բառերի նման *Faîvîneç//նաւան- ցեղանվան մեջ նախաձայն F//ն- ընկել է: *Üainian ցեղանվան *նան- «զինի» հիմքը տարբերակն է լինելու Ուրարտական քագակորության զիւավոր բաղադրամասը հանդիսացած երկրի BiaSn-a- (երկրների՝ BiaSnili) անվան, որի ճիշտ արտասանությունը, ըստ Ի. Ս. Դյակոնովի, կարող էր լինել *Vâinô կամ *Viânô⁶²: Մեր կարծիքով, սրանք արմատակիցներն են ազգակից հնդեվրոպական լեզուների հետևյալ բառերի. իներ. * նինա, լուկ. wiana, հոմեր. հուն. (F)օտնօս, լատին. vīnum, գերմ. wein, ռուս. вино, հայ զինի և այլն, որոնք բոլորն են «զինի» են նշանակում⁶³:

Այնիների ցեղանվան այդպիսի ստուգարանության ճշմարտացիությունը հաստատվում է ոչ միայն նրանց՝ արարատյան հատվածի բնակության շրջանների հնագույն անունների «խաղողային» ստուգարանությամբ, այլև նրանց մյուս հատվածի բնակության Ուխտիա (Օնտիա) անվան ստուգարանության միջոցով: Այն երկրանունը ևս «խաղողային» ստուգարանություն ունի: Նրա հիմքում մենք այժմ տեսնում ենք⁶⁴ h.-ե. * նիտ- նախաձելը (ծագած h.-ե. * նե-/* ուլորել, հյուսել» արմատից), որից սերած ազգակից լեզուների մի շարք բառեր ունեն կամ «ուլի» կամ «խաղողի վազ» նշանակությունները⁶⁵: Առաջին դեպքում հաշվի է առնվել ծառի ճյուղերը մարդու կողմից հեշտությամբ ոլորելն ու դրանցից հյուսածո իրեր պատրաստելը, երկրորդ դեպքում՝ խաղողի վազի աճելու ձևը (Հ. Աճառյանը առաջինին հանգող *wítā- նախաձելից է դնում հայ. զիհի<*զիյ «զիհի»<«ուլի» բառը⁶⁶: Դրանց սերտ կապի վկայությունն է հաստատում հու-

Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ.՝ ՊԲՀ, 1968, -2, էջ 91, Ս. Պ ե տ - ը ո ւ յ ա ն. «Շարայի ցեղամիությունը»..., էջ 67:

⁶⁰ Strabo, XI, 14, 14.

⁶¹ Խ ո ր ե ն ա շ ց ի ք լ ո ւ թ յ ա ն. «Շարայի ցեղամիությունը»..., էջ 66-67, 73-74:

⁶² И. М. Д յ ա կ օ ն օ վ. Խորրիտսкий и урартский языки.— Языки Азии и Африки. Языки древней Передней Азии. Т. III. М., 1979, с. 56.

⁶³ Т. В. Г а м к р е լ ի ձ զ ե, В. В. И в а н օ վ. Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ ԻЯИ), տ. II. Тбилиси, 1984, с. 647.

⁶⁴ Այլ ստուգարանությամբ տեսն U. Պ ե տ ը ո ւ յ ա ն. «Շարայի ցեղամիությունը»..., էջ 67, ն ո ւ յ ն ի՝ Հացագղիների մշակության և պաշտամունքի արտացոլումը՝ Շարայի ավանդագրույցում.՝ ՊԲՀ, 1981, № 3, էջ 201-202:

⁶⁵ ԻЯИ, տ. II, ս. 649-650.

⁶⁶ ՀԱԲ, հ. IV, էջ 627:

նարեն (F) յետք «ուսի» բառը, որը հոմերոսյան հունարենում «խաղողի վազ» է նշանակում⁶⁷: *Ուխտիա/Միտիա* երկրանունը ևս իր «խաղողային» ստուգարանությամբ հաստատում է այնիանների՝ իր բնակիչների, * սպան ցեղանվան «զինիական» ստուգարանության ճշմարտացիությունը: Ինչպես *Բիանա-/Վ(ի)անձ երկրանվան դեպքում*⁶⁸, այս դեպքում ևս *Օնտիա/Միտիա երկրանունը* և (F) *Անտառէ/Յանան-* ցեղանունը զալիս են հաստատելու հայի կյանքում և Հայկական լեռնաշխարհի տնտեսության մեջ խաղողագործություն-զինեզործության ժամանակին ունեցած կարևոր դերի իրողությունը⁶⁹:

Այսպիսով, Ասորեստանի թագավոր Թիգլաթֆիլասար I-ի մ. թ. ա. 1112 թ. նախրյան արշավանքը նկարագրող սեպագիր արձանագրության մեջ հիշատակված մի շարք լեռնանունների և երկրանունների քննությունը ցույց է տալիս, որ՝ 1. հետագա Մեծ Հայքի Արարատ աշխարհի այդ տեղանունները սերտ կապի մեջ են նախորդ և հաջորդ դարաշրջանների իրականության ու հայկական առասպելաբանության հետ, որ՝ 2. նույն տարածքներում դրանց հմաստարանական երկվորյակ տեղանունների հանդիպում ենք հաջորդ դարերի ընթացքում, որ՝ 3. դրանց մեծ մասն ունի հնդեվրոպական-հայկական հստակ ստուգարանություն⁷⁰: Իսկ սրանք բոլորը միասին խոսում են մ. թ. ա. II հազարամյակում Արարատյան դաշտի և հարավից շրջանների բնակչության հնդեվրոպական-հայկական ընդհանրությանը պատկանելու մասին:

“АРАРАТСКИЙ РАЙ” В КЛИНОПИСНЫХ ИСТОЧНИКАХ

САРГИС ПЕТРОСЯН

Р е з ю м е

В надписях ассирийского царя Тиглатпаласара I говорится о походах ассирийцев в страны Наири. Исходным пунктом военного похода 1112 г. до н. э. был Тумме (в районе Харпута), а конечным пунктом – Дайаени (поздн. Тайк в бассейне реки Чорох). Во время этого похода армия

⁶⁷ ИЯИ, т. II, с. 628, 650.

⁶⁸ U. Պ է տ ր ո ւ յ ա ն. Գնունի նախարարական սոնհի և զինու պաշտամունքի շուրջ.- ՊԲՀ, 1999, № 2-3, էջ 187-188:

⁶⁹ Նույն տեղում, էջ 180-187, ն ո ւ յ ի՝ Հին հայոց խաղողագործ աստվածը.- Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2004, էջ 158-164:

⁷⁰ Թիգլաթֆիլասար I-ի նույն արձանագրության մեջ հիշատակված են նաև հնդեվրոպական ծագումով ուրիշ լեռնանուններ և երկրանուններ (տե՛ս U. Պ է տ ր ո ւ յ ա ն.«Եղջերավոր»-«զիշատիչ» հակադրամիասնական պաշտամունքի արտացոլումը նախրյան մի քանի տեղանուններում, էջ 48-49):

Тиглатпаласара преодолела 16 “могучих гор” и победила 23 “царей” стран Найри. В армянских преданиях говорится, что патриарх Ной посадил первый виноградник именно в районе горы Арапат. С этой точки зрения заслуживают особенного внимания такие топонимы из Араратской равнины клинописного периода, какими являются хоронимы Šururia<*Šur ur ia (ср. арм. շոր//շուր “виноградная кисть, гроздь без виноградин”), Uiram<*Ūir am (ср. арм. վիրենի “сорт винограда”) и “Aza//*Ūaza (ср. арм. վազ “виноградная лоза”). Страбон сообщает, что одна часть айнианов обитала за горами Аб и Нибар, т. е. на Араратский равнине. Этноним (F)Ա’ւայնէ//*ւայն-ian находится в прямой связи как с хоронимом Biajna-//*Vājnə или Viājnə (по И. М. Дьяконову), так и со словами “вино” индоевропейских языков. В данном случае надо иметь в виду факт широкого распространения виноградарства и виноделия у аратской части древних армян.

“THE ARARAT PARADISE” IN CUNEIFORM SOURCES

SARGIS PETROSSYAN

S u m m a r y

During the march of 1112 B.C. the Assyrian army headed by Tiglath-pileser I surmounted 16 “mighty” mountains and conquered 23 “kings” of the lands of Nairi. It is said in the Armenian legends that patriarch Noah planted the first vine exactly in the area around Mount Ararat. According to this point of view special attention should be paid to the toponyms dating back to the cuneiform period of Ararat Valley, such as Šururia<*Šur-ur-ia (Cf. Arm. շոր//շուր “vineyard cluster”); Uiram<*Ūir-am (Cf. Arm. վիրենի “a sort of grape”) and “Aza//*Ūaza (Cf. Arm. վազ “vine”). Strabo testifies that part of Aynians inhabited the area lying beyond Abos and Nibaros mountains , i.e. Ararat Valley. Ethnonym (F)Ա’ւայնէ//*ւայն-ian (Cf. the word “wine” in Indo-European languages) is the reflection of the fact that vine-growing and wine-making were widespread among the ancient Armenians inhabiting the area near Mount Ararat.